



# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քուրդ-հայկական երկխոսության հանձնաժողովի ստեղծումը

Հիշատակելով, որ 1915-1923 թվականներին թուրքական իշխանությունների կողմից իրականացված ցեղասպանությունը հանգեցրել է աղետալի կորուստների հայերի, ասորիների-արամեացիների, հույների և Փոքր Ասիայի այլ՝ ոչ թուրքական ծագմամբ ժողովուրդների համար, չկանխված և չպատժված ցեղասպանությունը հանգեցրեց թուրքիայում քրդական բնակչության հենց նույն ցեղասպանական քաղաքականության հետ առերեսման:

Այս փաստերը հիմք ընդունելով՝ սույնով մենք հայտարարում ենք քուրդ-հայկական երկխոսության հանձնաժողովի ստեղծման մասին, որը նպատակ է հետապնդում կազմակերպելու միջքրդական և քուրդ-հայկական երկխոսության գործընթացը: Դրա նպատակն է իրականացնել միասնական պայքար Փոքր Ասիայի բոլոր ժողովուրդների իրավունքների պաշտպանության համար և հաստատել արդարության և օրենքի գերակայություն մեր ընդհանուր հայրենիքում ընդհանուր ապագայի համար:



քուրդ- հայկական երկխոսության հանձնաժողով